ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբեր, 2025 թվականի № 114-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ – ԾՐԱԳՐԵՐԻ ՏՆՕՐԵՆ ԼԵՎՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ – ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասով, 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N-ՀՄ-02/721/25 գրությունը և հաշվի առնելով Ընկերության գործադիր տնօրենի տեղակալ-ծրագրերի տնօրեն Լևոն Մարգարյանի և գործադիր տնօրենի տեղակալ-ֆինանսական տնօրեն Արարատ Հակոբյանի կողմից աշխատանքի արդյունավետ կազմակերպման ու ղեկավարման հանգամանքը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության գործադիր տնօրենի տեղակալ-ծրագրերի տնօրեն Լևոն Մարգարյանի և գործադիր տնօրենի տեղակալ-ֆինանսական տնօրեն Արարատ Հակոբյանի նկատմամբ կիրառել խրախուսման միջոց՝ կատարելով միանվագ դրամական պարգևատրում յուրաքանչյուրին իր՝ Ընկերության հետ կնքված աշխատանքային պայմանագրով սահմանված մեկ ամսվա հաշվարկային աշխատավարձի չափով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված միանվագ դրամական պարգևատրումը կատարել Ընկերության միջոցների հաշվին սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկ ամսվա ընթացքում:

3. Սույն որոշումը ենթակա է կատարման Ընկերության գործադիր տնօրենի կողմից իր իրավասության սահմաններում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

26 դեկտեմբեր, 2025 թվականի

ք. Երևան